

տեւ գիտէր Գրիգոր, թէ Սաչատուր պիտի այցելէ նաեւ Լեհաստան, այս պատճառաւ «բազում բանս հրամայականս պատուիրեաց Սաչատուր վարդապետին, թէ ի հասանելն քո յԻլով (Լվով)՝ մի՛ գուցէ թէ ընկալցիս զՆիկոլն ի կարգ եւ ի պատիւ Եպիսկոպոսութեան» : Այսպէս արդէն «ունէր ռիս չար ի սրտի»¹⁶ հանդէպ Նիկոլի, երբ ոտքը կը դնէր նուիրակը Լեհական սահմանէն ներս : Այս պատճառաւ ալ յիշելով նուիրակին դալուստն ի Լվով կը գրէ Սիմէոն դպիր (էջ 207) .

Դարձեալ Հայոց փորձանք եկին,
Ա՛յլ առաւել քան զառաջին :

Եպիսկոպոսը երբ լսեց թէ կաթողիկոսին նուիրակը՝ Սաչատուր վ. Կեսարացի մեկնած է Կ. Պոլսէն եւ կը մերձենայ Լեհական սահմանները, «աւուր մի ճամբայ նմա ընդ առաջ» դնաց ի յարգանս «եւ էր նմա յոյժ խոնարհած» :

Նուիրակը ի սկզբան սիրով եւ մեղմութեամբ կ'ընթանար Եպիսկոպոսին հետ. ի միասին կ'ուտէին, ի միասին կ'իջնային Եկեղեցին, դատուն մէջ ի միասին ունէին իրենց տեղը եւ աղօթակից էին իրարու : Չէր երեցընէր թէ «ունէր ռիս չար ի սրտէ» թելադրութեամբ Գրիգոր Կեսարացոյ :

Եպիսկոպոսի հակառակորդներն սակայն տակաւ տակաւ հասցուցին իրենց ձեռքերը

¹⁶ Վիպասանութիւն, էջ 205 :